Արձանագրություն N 2

<< ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/3>> ծածկագրով Երևանի <<Տորք Անգեղ>> մարզական միության շենքի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17.08.2016թ
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Ջանջուղազյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Ռ. Խոջայան/ գնահատող /
	Լ. Մելիքյան/գնահատող/
	Գ. Գևորգյան/ բացող /
	Հ. Սարգսյան/ բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Կիրակոսյան

1. <<ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/3>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ Երևանի <<Տորք Անգեղ>> մարզական միության շենքի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
2	<<ՆՈՐԱՅՐ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> ՍՊԸ
4	<<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ
6	<<Բագարանի բարիք>> ՓԲԸ և <<ԹԱԹ>> ՍՊԸ կոնսորցիում

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Բանակցային ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևանի <<Տորք Անգեղ>> մարզական միության շենքի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ

Մասնակցի անվանումը	Առաջարկած գինը			
	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր
<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	605 000	60 000	133 000	798 000
<<ՆՈՐԱՅՐ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ>> ՍՊԸ	500 000	55 000	-	555 000
<<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ	480 000	24 000	100 800	604 800
<<Բագարանի բարիք>> ՓԲԸ և <<ԹԱԹ>> ՍՊԸ կոնսորցիում	482 667	59 000	108 333	650 000

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան անճշտություններ:

2.3 <<Բագարանի բարիք>> ՓԲԸ և <<ԹԱԹ>> ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժվել է:

2.4 <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի տուժանքի մասին համաձայնագրում և դրան կից վճարման պահանջագրում բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունը և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժվել է:

2.5 <<Նորայր և ընկերներ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերում առկա անհամապատասխանության մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները.

ա) <<ՇԻՆ-ՏԵԽ>> ՍՊԸ -ի կողմից ներկայացված.

- մասնագիտական փորձառության մասին հայտարարությունների մեջ նշված նմանատիպ պայմանագրերից ոչ բոլոր պայմանագրերն են համարվում նմանատիպ տվյալ գնման գործընթացին:

3.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի պահանջները՝ ծանուցել 3.1 կետում նշված մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար: Հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Բանակցային ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի օգոստոսի 22-ին, ժամը 11:40-ին ՀՀ Քաղաքաշինության նախարարությունում ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ 448 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Ջանջուղազյան
Անդամ՝		Ռ. Խոջայան
		Լ. Մելիքյան
		Գ. Գևորգյան
		Հ. Սարգսյան
Քարտուղար		Ն. Կիրակոսյան